



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ԾԻԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻ ՄԱՏՈՒՅՈՒԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

**ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՆԵՐ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԸՆՁԵՌԱԾ
 ՆԻԹԱԿԱՆ ԲԱՐԻՔՆԵՐԸՆ ՀԱՐԿ Է
 ՀՈԳԵՒՈՐ ՄՆԱՅՈՒՆ ԲԱՐԻՔՆԵՐ ԱՊԱՀՈՎԵԼ**

ԸՍՈՒՄ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ

Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, ընկերակցութեամբ Ազգ. Վարչութեան անդամներուն, գլխաւորութեամբ Տոքթ. Կարօ Յակոբեանի, եւ հեռահաս շրջաններու յանձնախումբին, Շաբաթ, 10 եւ Կիրակի 11 Մարտ 2007, Նեւատա նահանգի Լաս Վեկաս քաղաքի հայ համայնքի վերակազմութեան առաջին տարեդարձին առթիւ, աշխատանքային երկօրեայ այցելութիւն մը տուաւ:

Առաջնորդ Սրբազանը Կիրակի, 11 Մարտ 2007-ին Ս. եւ անմահ պատարագ մատոյց: Սրբազան Հօր կը սպասարկէին Կոստական Ժողովի ատենապետ եւ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հովիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ Աւագ Սարկաւազներէն Բարշ. Չոհրապ Սրկ. Եարալեան:

Առաջնորդ Սրբազանը, հոգեւոր իր պատգամին մէջ, շնորհաւորեց Լաս Վեկասի ծիսական համայնքի վերակազմութեան առաջին տարեդարձը եւ բարձր գնահատելով ծիսական յանձնախումբի տարուան մը ճիգերն ու ի գործ դրած եկեղեցանուէր սրտեռանդ աշխատանքները, տարիով մը երկարաձգեց անոր պաշտօնավարութիւնը, մաղթելով, որ նաոր ծրագիրներուն իրագործումը շարունակուի յաջողութեամբ: Ապա Առաջնորդ Սրբազանը անդրադառնալով Մեծ Պահոց հոգեւոր ճանապարհորդութեան, ու մանաւանդ օրուան ճաշու աւետարանական հատուածի Տնտեսի Առակին, որով ճանչցուած է Մեծ Պահոց չորրորդ Կիրակին, վեր առաւ ու շեշտեց Աստուծոյ ընձեռած երկրաւոր ու ժամանակաւոր բարիքներէն, նիւթն ու մեզի ներկայացած պատեհութիւններէն բարին իրագործելու անհրաժեշտութիւնը: Նիւթական բարիքները, մեզի յանձնուած, վստահուած շնորհքները, պետք է միջոց եւ հանգրուան ծառայեցնել աւելի բա՛րձր, անկորնչելի արժեքներու ձեռքբերման, ըսաւ Սրբազանը, որովհետեւ ով որ փոքր ծառայութեան մէջ հաւատարիմ է, մեծին մէջ ալ հաւատարիմ է: Եթէ որպէս տնտեսներ, հաւատարիմ չգտնուիք եւ չկարողանաք արդիւնաւորել մեզի վստահուած նիւթական եւ երկրաւոր պաշտօնները, բարիքները ու պարգեւները,

ապա՝ ի՞նչպես Աստուած մեզի պիտի վստահի երկրաւորէն համեմատաբար անհուն, անսպառ երկնային գանձերը, պարգեւներն ու պաշտօնները: Առակին Տնտեսը, իրեն ներկայացած պատեհութենէն կրցաւ ճարպիկութեամբ եւ հնարամտութեամբ շնորհք գտնել, դուք ալ սիրելիներ, ըսաւ Սրբազան Յայրը, Աստուծոյ ձեզի տուած նիւթական բարիքները ի սպաս դրէք հոգեկան գանձերու ձեռքբերման: Յաւաքական ճիգերով ձեր գանձերէն եւ շնորհքներէն բաժին հանեցէք ազգին, եկեղեցւոյ, ձեր տաղանդներն ու նիւթական կարելիութիւնները ի սպաս դրէք ձեր համայնքայի հասարակաց կեանքի բարօրութեան եւ հաւաքական ճիգերով աշխատեցէք կառուցել աղօթքի տունը՝ Աստուծոյ բնակարան եկեղեցին, որպէս լոյսի, յոյսի եւ հաւատքի մկրտարան հայ հոգիի:

Յաւաքական խոստովանանքէ եւ հաղորդութենէ ետք, հոգեհանգստեան յատուկ արարողութիւն կատարուեցաւ «Ակոս» թերթի խմբագիր Յրանդ Տիկազի հոգւոյ խաղաղութեան համար, անոր սպանութեան քառասունքին առիթով:

Յաւարտ Ս. եւ անմահ պատարագին, հաւատացեալներ դպրաց դասի ընկերակցութեամբ երգեցին «Կիլիկիա» եւ «Մեր Յայրենիք» երգերը: «Պահպանիչ» օրհնութեան աղօթքէն ետք, եկեղեցւոյ տիկնանց միութեան կողմէ ներկաները հիւրասիրուեցան եւ առիթը ունեցան Առաջնորդ Սրբազան Յօր եւ Ազգ. Վարչութեան անդամներուն հետ մտերմիկ գրուցելու:

Յայտնենք, որ Շաբաթ գիշեր, տեղի ունեցած էր խրախճանակական ձեռնարկ մը, հովանաւորութեամբ Սրբազան Յօր ու մասնակցութեամբ ժողովականութեան ներկայացուցիչներու:

Լաւ Վեկաս իրենց կեցութեան առիթով, Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութեան ներկայացուցիչները նաեւ հանդիպումներ ունեցան ծխական յանձնախումբին ու նորակազմ Տիկնանց Յանձնախումբի անդամներուն հետ, քննարկելու համար շրջանի անմիջական հարցերն ու ծրագիրներուն իրագործման ընթացքը:

DURING HOLY MASS ON THE FIRST ANNIVERSARY OF THE REESTABLISHMENT OF THE LAS VEGAS PARISH

AS STEWARDS WE MUST SECURE OUR SPIRITUAL BLESSINGS THROUGH THE MATERIAL BLESSINGS GOD GRANTS US

DECLARED THE PRELATE

On Friday, March 9th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, departed for Las Vegas for a two day visit with the parish. The Prelate was accompanied by Executive Council members and the committee for distant parishes.

On Sunday, March 11th, the Prelate conducted Holy Mass assisted at the altar by Religious Council Chair and Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Muron Aznikian, as well as Archdeacon Zohrab Yaralian from St. Garabed Church.

In his spiritual message, the Prelate congratulated the parish on the first anniversary of their reestablishment, commended the efforts of the devoted servants of

the parish, and wished them success. In his sermon on the fourth Sunday of Lent, the Sunday of the Unjust Steward, the Prelate emphasized the necessity of doing good deeds with the material blessings and opportunities God grants us. God trusts us to use the earthly, material blessings He offers us to bring about higher, eternal values, for he who is faithful in what is least, is also faithful in much. If we, as stewards, are not faithful and cannot be trusted with earthly riches, how will God trust us with eternal treasures? The Prelate urged the parishioners to serve toward the enhancement of the community through their collective efforts and means, and work together to achieve the plan to build a church.

During the requiem service following Mass, special prayers were offered for the soul of Hrant Dink on the 40th day after his assassination.

Church services concluded with the singing of "Giligia" and "Mer Hayrenik" and the "Bahbanich" prayer by the Prelate. A reception organized by the Ladies Association followed.

On the evening of Saturday, March 10th, a banquet took place under the auspices of the Prelate with the participation of Executive Council members. Throughout the two-day visit, the Prelate and Executive Council members also had the opportunity to meet with the parish council and the newly established Ladies Association to discuss the actualization of future endeavors. Taking into consideration the relentless work of the Parish Council, its commission was extended for another year.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org, Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.